վիճակի արտահայտել վերարտադրության գործընթացի իսկական, արմատական վերափոխման գլխավոր նախանշանը, որն իրավունք կտա խոսելու տնտեսության զարգացման իրապես նոր փուլի մասին:

Եթե Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռոբերտ Սոլոուն 1998 թվականին կտրականապես հերքեց զարգացած կապիտալիզմի նոր փուլի հավանականությունը, հիմնվելով արտադրողականության վրա համակարգիչների ազդեցությունն ապացուցող նախանշանների բացակայության վրա, ապա արդեն 2000 թվականին «նոր տնտեսության» հայեցակարգի քննադատների թիվը խիստ աճեց, որոնք մշակեցին այդ գաղափարի հերքման ամբողջական համակարգ՝ վերլուծելով և գնահատելով արտադրողականության աճի վրա տարբեր գործոնների, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը: Օրինակ, ամերիկյան տնտեսագետ Ռ.Գորդոնի հաշվարկներով, 1995 թվականից հետո ԱՄՆ-ի տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության ընդհանուր հավելաճի մեջ համակարգչայնացման տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 0,07%, այն դեպքում, երբ հավելաճը կազմել է 1,33%: Ռ.Գորդոնի հաշվարկներով, սահմանված ժամկետում համակարգչայնացման ոլորտում իրականացվող փաստացի ներդրումները պետք է ապահովեին տնտեսության հիմնական ճյուղերի (ընդհանուրի 88%-ը) աշխատանքի արտադրողականության 0,33% հավելաճ: Այլ կերպ ասած՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրված սպասվող ներուժը բավականաչափ գերացանցեց ստացված արդյունքները[1]:

Բնական է, որ խոսքը չի վերաբերում համակարգչային տեխնիկայի մնացած առավելությունների բացառմանը (աշխատանքի հարմարավետություն, հաշվարկների արագագործություն, խմբագրում և այլն), քանի որ դրանք ակնհայտ են: Սակայն Ռ.Գորդոնի կարծիքով, արտադրողականության բարձրացման գործում համակարգիչները ներդրել են այն ամենը, ինչին ընդունակ են եղել[2]:

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՊՃՀ ասիստենտ

Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐ (ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ)

Ռուս տնտեսագետ Մ.Տուգան-Բարանովսկին շուրջ հարյուր տարի առաջ պարբերական արդյունաբերական ճգնաժամերը համարում էր «տնտեսական կարգի ամենահանելուկային և անհասկանալի» ու գիտության մեջ մինչև վերջ չբացատրված երևույթներից մեկը:[3] Համաշխարհային տնտեսագիտական մտքի երևելիների (Ս. դը Սիսմոնդի, Կ.Մարքս, Կ.Ժուգլյար, Մ.Տուգան-Բարանովսկի, Ն.Կոնդրատև, Ա.Շպիտգոֆ, Ի.Շումպետեր, Ջ.Հիկս, Է.Հանսեն, և ուրիշներ) աշխատությունների մատենագիտական ցանկը կլիներ թերի, եթե նրանում բացակայեին Մենտոր Բունիաթյանի աշխատությունները:

Սույն հոդվածում անդրադառնում ենք արդյունաբերական ճգնաժամերի վերաբերյալ հայ տնտեսագետի հայեցությանը, որպես իր իսկ արտահայտությամբ «առավել բարդ և նշանակալից երևույթներից» մեկի:

Առևտրական կապիտալը ավելի շարժուն է և վերաբերում է ապրանքներին և այլ շարժական արժեքներին: Ապրանքաշրջանառության խանգարումները կարճատև բնույթ ունեն և հաճախ ավարտվում են հենց առևտրի ոլորտով: Այլ է արդյունաբերությունը, որտեղ գերազանցապես իշխում է անշարժ կապիտալը և զբաղված է մեծ թվով աշխատուժ: Եվ բնական է, որ արդյունաբերական ճգնաժամը առաջ է բերում վնասներ և շահույթի անկում տևական ժամանակով, ինչը ենթադրում է ինչպես կապիտալի շահագործման, այնպես էլ զբաղված աշխատուժի կրճատում: Այսինքն ինչպես նկատում է Մ.Բունիաթյանը, ճգնաժամը դառնում է ոչ միայն «բաշխման ֆենոմեն», այլև մեծապես ազդում է հասարակական կապիտալի կազմի և արտադրողականության վրա, ինչն առավել խորն ու բացասաբար է անդրադառնում երկրի տնտեսական բարեկեցության վրա:

Արդյունաբերության որևէ ճյուղում ճգնաժամը դրսևորվում է որպես նրա արտադրողական ուժերի և դրանց շահավետ օգտագործման հնարավորության միջև անհամապատասխանության հետևանք, երբ շուկան գերլցվում է, գներն իջնում են և արտադրողական ուժերը օգտագործվում են ոչ լրիվ հզորությամբ, մինչև կուտակված արտադրանքի իրացումը:

Տնտեսական կազմակերպությունը անհամեմատ բարդացել է, վերաճել ներհյուսված համակարգի: Աշխատանքի լայն բաժանման և արտադրության մասնատվածության պայմաններում առավել դժվարացել է շուկայական կոնյունկտուրան և ապրանքների արտադրությունը իր բոլոր փուլերում համապատասխանեցնել հասարակության իրական պահանջներին: Արդյունաբերական ձեռնարկությունները հարմարեցված են որոշակի արտադրությունների, որոնց փոփոխելը հաճախ կապված է մեծ բարդությունների հետ: Ուստի փոփոխությունը սպառման պայմաններում, ինչպիսի պատճառներով էլ այն պայմանավորված լինի, կարող է կրճատել պահանջարկը տվյալ արդյունքի նկատմամբ՝ առաջ բերելով վերակապիտալացման անհրաժեշտություն:

Նման հետևանքներ կարող է ունենալ նաև տեխնիկական առաջընթացը և կապիտալի արտադրողականության բարձրացումը: Ու թեև այս դեպքում արտադրանքը էժանանում է, սակայն խզվածությունը առաջարկի և պահանջարկի միջև շարունակում է պահպանվել:

Մ.Բունիաթյանի դիտողությունները վկայում են վերլուծության առարկայի բարդության և ոչ միանշանակ բացատրության մասին: Հենց այս իմաստով էլ նա համաձայնում է հին պատմական դպրոցի ներկայացուցիչ

---

[1] Federal Reserve Bank of San Francisco Economic Letter. N2000-34, 10.11.2000, p. 1-3.
[2] А.Дейкич, "Новая экономика'' Клинтона и ''профицитные планы'' Буша, "США и Канада'', 2001, N10, стр. 22-23.
[3] М.И.Туган-Барановский, Периодические промышленные кризисы, СПб, 1914, с.XIII.

Վ.Ռոշերի այն մտքին, թե արտադրության հանկարծակի և ուժգնորեն մեծացնող, սպառումը կրճատող կամ նույնիսկ միայն ապրանքափոխանակության սովորական կարգը խախտող ցանկացած կացություն կարող է արտադրության համապատասխան ոլորտում առաջացնել ճգնաժամ:[1]

Բունիաթյանը համակողմանի ու հանգամանորեն վեր է լուծում արդյունաբերական ճգնաժամի տարբեր պատճառները՝ չանտեսելով ոչ մի առկա և որն ավելի կարևոր է, աննկատելի, բաքնված նրբերանգները:

Ներկայացնելով հումքի էժանացման և թանկացման հետևանքները նա նկատում է դրանց երկակի ազդեցությունը արդյունաբերության վրա. եթե մի կողմից հումքի էժանացումը մեծացնում է դրանից պատրաստվող արդյունքների սպառումը, ապա մյուս կողմից սպեկուլյատիվ նկատառումներով մեծ քանակի հումք պահեստավորած արդյունաբերողները ավելի են ներքաշվում առևտրական սպեկուլյացիայի մեջ՝ կրելով իրենց վրա առևտրական ճգնաժամերին հատուկ բոլոր հետևանքները: Ինչ վերաբերում է թանկացմանը, ապա այս դեպքում կարող է սահմանափակվել արտադրությունը՝ առաջացնելով տվյալ ոլորտում զբաղեցրած կապիտալի և դրա պահանջարկի միջև անհամապատասխանություն:

Հարկ է նշել, որ արդյունաբերական ճգնաժամերի սրությունը առավել ակնառու դրսևորվում է տնտեսական ակտիվության վերելքային փուլում[2], որտեղ գերարտադրության կործանարար հետևանքները արդյունաբերության վրա էլ ավելի խորն են և ուժգին:

Արդյունաբերական ճգնաժամերը իրենց ընդգրկումներով կարող են տարբեր լինել: Եվ չնայած արտադրության ճյուղերի փոխկապվածությանը, ճգնաժամը որևէ առանձին ճյուղում կարող է առաջ բերել ժողովրդատնտեսական կյանքի մասնակի խանգարում, բայց ոչ ընդհանուր արդյունաբերական, իսկ այնուհետև ընդհանուր տնտեսական ճգնաժամ, եթե դրա համար առկա չեն այլ ավելի խորը հիմքեր: Ավելին, այն նույնիսկ կարող է մեկ այլ մրցակից ճյուղի զարգացման պատճառ դառնալ: Մ.Բունիաթյանը դա հիմնավորում է տնտեսական պատմության փորձով. երբ XIX դարի 60-ական թվականների «բամբակի սովի» հետևանքով բամբակագործական արդյունաբերության ճգնաժամը պատճառ էր դարձել վուշի և մետաքսի արդյունաբերության բուռն զարգացման: Այդ է նշում նաև Տուգան-Բարանովսկին հիմնվելով իր կողմից բերված փաստական տվյալների վրա. արտադրության կրճատումը ոչ միայն նպաստել էր բրդի, մետաքսի, վուշի արդյունաբերության զարգացմանը, այլև բերել էր նրան, որ բամբակյա պատրաստի արտադրանքը այնքան էր ընդլայնվել, որ գործարանատերերի և առևտրականների մոտ կուտակվել էր չվաճառված կտորեղենի հսկայական պաշարներ:[3]

Ինչ վերաբերում է ընդհանուր արդյունաբերական ճգնաժամերի ավելի խոր հիմքերին Մ.Բունիաթյանը ընդգծում է. «ընդհանուր արդյունաբերական ճգնաժամի հիմքում ընկած են տվյալ ժամանակի տնտեսական կյանքի **ընդհանուր** պայմանները, որոնք տանում են ժողովրդական տնտեսության ընդհանուր խանգարումների, թեև այդ պայմանները առաջին հերթին կարող են դրսևորվել արտադրության որևէ **առանձին** ճյուղում՝ այն դարձնելով ամբողջ արդյունաբերական արտադրության և տնտեսական կյանքի շարժման ելակետը»:[4]

Հայ տնտեսագետը կատարում է սահմանազատում, ըստ որի արդյունաբերության մեջ ժամանակ առ ժամանակ վերելքներն ու վայրէջքները, լինելով գլխավորը, այնուամենայնիվ դրանք պարբերական տատանումների մասնակի դրսևորումներ են, որոնք միաժամանակ բայց տարբեր ուժով են արտահայտվում տնտեսական կյանքի արտադրության, շրջանառության և սպառման ոլորտներում: Հետևապես դրանց ծագման ընդհանուր հիմքերը համընկնում են տնտեսական կյանքի ալիքաձև շարժման պատճառների հետ, թեև հատուկ պայմաններում արդյունաբերությունը կարող է այդ շարժման մեջ դառնալ առաջատար:

Մ.Բունիաթյանը գտնում է, թե արդյունաբերական ճգնաժամերի սրմանը նախորդում է սպեկուլյացիոն գործունեության վերելքի շրջանը: Արտահանման կամ ներքին սպառման աճի սպասելիքներով պայմանավորված արդյունաբերական արտադրանքի առևտրային սպեկուլյացիան կարող է դառնալ զարգացման խթան և մեծացնելով արտադրության շահութաբերությունը գայթակղել ձեռնարկատերերին արտադրությունների ընդլայնմանը, որը փոխանցվում է մի ճյուղից մյուսին: Սակայն տնտեսական գործունեության աշխուժացումը և սպառման մեծացումը օժանդակում են ընդլայնվող արտադրությանը, քանի դեռ չեն գերլցվել ապրանքաշրջանառության բոլոր ուղիները և չի սպառնում ընդհանուր տնտեսական ճգնաժամի վտանգը:

Արդյունաբերության վերելքի ազդակ կարող է հանդիսանալ գյուղատնտեսական արտադրությունը, հատկապես բերքառատ տարիներին, երբ գյուղատնտեսական ապրանքների գնահատման համար առկա է բարենպաստ կոնյունկտուրա: Որպես արդյունաբերության աշխուժացման վերաբերյալ Մ.Բունիաթյանի հայեցությանը զուգահեռ նկատենք, որ դեռևս XVIII դարի անգլիացի փիլիսոփա, տնտեսագետ Դավիդ Յումը նկատել է այն փոփոխությունը, որ ունենում է դրամական զանգվածը իրական եկամուտների և զբաղվածության վրա: Մասնավորապես, երբ Ամերիկայի ոսկու հանքերի հայտնագործման արդյունքում սկսեց վերելք ապրել արդյունաբերությունը և առևտուրը: Գործում էր իրական մնացորդների էֆեկտը, երբ «մետաղների ներհոսքի և գների աճի միջև ընկած ժամանակամիջոցում» բարենպաստ պայմաններ են ստեղծվում, կուտակված փողի արտադրողական կիրառման համար: Կամ հայտնի է XVIII դարի սկզբներին Ջոն Լոի հայտնի «փորձի» դասերը, կապված «չափավոր ինֆլյացիայի» պայմաններում փողի (թղթադրամի) կատարած դերի հետ, երբ այն օգտագործվում է արտադրության և առևտրի զարգացման համար: Տնտեսության պատմության և տնտեսագիտական մտքի դասերի վրա են կառուցված Մ.Բունիաթյանի այն դիտողությունները, թե արդյունաբերական վերելքը մի որոշ մասով էլ կապված է թղթադրամի էմիսիայի, ինչպես նաև թանկարժեք

---

[1] M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908,p. 49.

[2] Պատահական չէ Լեսկյուրը նկատում, թե «որպեսզի դեպրեսիան ճանաչել, տարբերել և գնահատել, անհրաժեշտ է դիմել պատմությանը և վերելքի էվոլյուցիային»: Лескюр Ж., Общие и периодические кризисы, СПб, 1908, с.2.

[3] М.И.Туган-Барановский, նշվ. աշխ., էջ 123:

[4] М.Бунятян, Экономические кризисы, М., 1915, с.62

մետաղների արդյունահանման ավելացման հետ,[1] որը իր հետ բերելով մյուս ապրանքների նկատմամբ պահանջարկի մեծացում բարձրացնում է գների ընդհանուր մակարդակը: Որպես վերջինի օրինակ նա նշում է XIX դարի 50-ական թվականներին Կալիֆորնիայում և Ավստրալիայում ոսկու հարուստ հանքավայրերի հայտնաբերման հետևանքով տնտեսական վերելքը:

Արդյունաբերության վերելքի պատճառ են հանդիսանում նաև տեխնիկայի կատարելագործումն ու նոր հայտնագործությունները, որոնք ծնում են նոր պահանջարկ և ընդարձակում գործունեության ոլորտը, ի վերջո ընգրկելով ամբողջ տնտեսական կյանքը: Այս առնչությամբ Մ.Բունիաթյանը խիստ ուշագրավ է դիտում XVIII դարի 80-ական թվականների նախօրեին մեխանիկական մանող և գործող սարքերի գյուտը, որին հետևեց բամբակագործական արդյունաբերության անանախադեպ զարգացումը՝ առաջ բերելով Անգլիայի ողջ տնտեսության ընդհանուր վերելք և ապա 1793թ.-ի մեծ տնտեսական ճգնաժամ: Տնտեսագետներ Բերինգը, Տուկը, Չալմերսը, Անդերսոնը և ուրիշները Անգլիայի 1793 թվականի տնտեսական ճգնաժամի պատճառը որոնում էին անգլո-ֆրանսիական պատերազմի կամ վարկային համակարգի մեջ: Մինչդեռ Մ.Բունիաթյանը դրանք համարում է գերարտադրության ճգնաժամեր. «1793 թվականի ճգնաժամը ամենածանրն էր Անգլիայում մինչև այդ եղած ճգնաժամերից և առաջին ամենախոշոր արդյունաբերական ճգնաժամը... 1793 թվականի ճգնաժամի պատճառը եղել է առևտրի և արդյունաբերության հանկարծակի վերելքը... Չնայած սպառման հարաբերական մեծ աճին, արտադրանքն ավելացել էր անհամեմատ մեծ մասշտաբներով, քան ներքին ու արտաքին շուկաների տարողությունն էր: ... Անկումը պայմանավորված էր ներքին ու արտաքին շուկաները բրիտանական ապրանքների գերլցումով, բայց չի հանդիսացել դրամական ճգնաժամի կամ պատերազմի ազդեցությամբ, տնտեսական գործունեության թուլացման հետևանքը»:[2]

Արդյունաբերության վերելքի փուլում Մ.Բունիաթյանը ուշադրություն է դարձնում մի կարևոր երևույթի վրա. սովորաբար այդ հատվածում տնտեսությունը բնորոշվում է բոլոր ոլորտների աշխուժացումով, որն արտահայտվում է արտադրողական ուժերի ինտենսիվ օգտագործումով, խոշոր շահույթների և սպառման աճով, բայց առավել մեծ չափով ուժեղ կապիտալացումով: Խոսքը վերաբերում է արդյունաբերական վերելքի ժամանակ այսպես կոչված «արտադրական բարիքների արտադրությամբ զբաղված արդյունաբերության ճյուղերի» գերակշռող դերին: Սակայն այդ գործընթացները զուգորդվում են որոշակի առանձնահատկություններով: «Սպառողական բարիքների սպառման և արտադրության ավելանալուն հետևում է արտադրական բարիքների կամ արտադրության միջոցների արտադրության անմիջական ուժեղացումը և ընդլայնումը»:[3] Փաստորեն Մ.Բունիաթյանը նշում է այն երևույթի մասին, որը տասնամյակներ հետո տնտեսագիտության մեջ ստացել է «աքսելերատորի էֆեկտ» անվանումը, որով տնտեսագետները փորձում են բացատրել տնտեսության ցիկլային բնույթը: Իսկ դա հանգում է նրան, որ սպառման ապրանքների պահանջարկի աճին կարող է հետևել ինվեստիցիոն ապրանքների արտադրության ավելի մեծ աճ, սպառման ապրանքների արտադրությունը գերազանցում է պահանջարկին և կուտակվում շուկայում:

Մ.Բունիաթյանը նշում է մի այլ առանձնահատկություն ևս. եթե սպառողական բարիքների արտադրությունը ինչ-որ չափով կարգավորվում է տվյալ ժամանակի իրական պահանջով, ապա արտադրամիջոցների արդյունաբերությունը ղեկավարվում է սպառողական բարիքների նկատմամբ ապագայում սպասվելիք պահանջարկով: Այսինքն վերջնական սպառողի հետ անմիջական շփման բացակայության պայմաններում անընդհատ աճող շահույթի մեծ մասը ծախսվում է ցանկացած արտադրական բարիքների մեծ պաշարների ձեռք բերման վրա: Հատկանշական է, որ ինչպես նկատում է Բունիաթյանը արտադրամիջոցներ արտադրող արդյունաբերությունների սերտ կապվածությունը ստեղծում է այնպիսի պայմաններ, որ արդյունաբերության որևէ մի ճյուղի վերելքը ոչ միայն նպաստում է իր հետ կապված այլ արդյունաբերության ճյուղերի զարգացմանը, այլև շատ հաճախ դրանց դարձնում է իր ապրանքների սպառողը:[4]

Մ.Բունիաթյանը արդյունաբերական վերելքը կապում է նաև այլ գործոնների, մասնավորապես վարկային հարաբերությունների զարգացման հետ: Սակայն, բոլոր դեպքերում պահանջարկի աճը, որը մի ժամանակ պայմանավորել է արդյունաբերության վերելքը, ժամանակ անց, Բունիաթյանի կարծիքով 4-5 տարի հետո վեր է ածվում վերելքի խոչընդոտի և ի հայտ է գալիս, որ արտադրությունը գերազանցում է իրական պահանջարկը, և որ շուկան հագեցված է ապրանքներով: Հատկապես այն ոլորտներում, որոնց թվին է պատկանում վերը նշված «գործիքային արտադրությունը»: Բունիաթյանի մտքի ընթացքը այսպիսին է. երբ սկսվում են սպառման դժվարությունները, ազատ կապիտալի թանկացման պայմաններում ձեռներեցությունն թուլանում է, դադարում է ձեռնարկությունների ընդլայնումն ու նորերի հիմնումը, և խիստ նվազում է արտադրամիջոցների նկատմամբ պահանջարկը: Ըստ էության դրա հիմնական պատճառն այն էր, որ արտադրամիջոցների պահանջարկի աճը կանխատեսվում էր ոչ այնքան ներկայում, որքան ապագայում: Այսինքն բացակայում էր իրական տնտեսական հիմքը: Դրամային (կապիտալային) շուկայի սղությունը ստիպում է կրկին դիմել վարկի օգնությանը, որը ունակ է լինում միայն մի որոշ ժամանակ վերահսկելու ստեղծված իրավիճակը: Ազատ կապիտալի անբավարարությունը գնալով ավելի զգալի է դառնում, քանի որ սպառվում են ազատ գնողունակ ուժի, իսկ հետևաբար նաև ազատ փոխատվական կապիտալի ստեղծման բոլոր աղբյուրները:

Ստեղծվում է պարադոքսալ վիճակ՝ կապիտալը ոչ միայն դադարում է կապիտալ ստեղծելուց, այլ ինքն է սկսում պահանջել ազատ կապիտալ իրեն պահպանելու համար: Այս երևույթը Բունիաթյանը բնութագրում է,

---

[1] Ժ.Լեսկյուրի վկայությամբ Վերներ Զոմբարտը ընդհանուր արդյունաբերական ճգնաժամերի վերջնական պատճառը տեսնում է շրջանառությունում մետաղական փողի քանակության ավելացման մեջ. Лескюр Ж., նույն աշխ., с380.

[2] M.Bouniatian, Geschichte der Handelskrisen in England, München, 1908, S.171

[3] М.Бунятян, Экономические кризисы, М., 1915, с.64

[4] M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908,p 52.

որպես «կապիտալիստական տնտեսության ակնառու հակասություն»:[1] Հասկանալի է որ խոսքը վերաբերում է պահանջարկի և առաջարկի խզվածությանը: Իսկ երբ արտադրությունը զրկվում է վարկային հենարանից, գների անկումը, հետևապես նաև մեծ կորուստները արդյունաբերողների համար դառնում են անխուսափելի: Վրա հասնող ճգնաժամը վեր է հանում սպեկուլյացիոն տենդով տարված ձեռնարկատերերի խոշոր կապիտալների աննպատակ ծախսման, ինչպես նաև չափազանց շատ ավելորդ ձեռնարկությունների առկայության փաստը:

Տնտեսական կյանքի փոփոխված պայմանները, որոնք ուղեկցվում են հասարակական կապիտալի մեծ կորուստներով, պատճառ են դառնում համառ պայքարի արդյունաբերությունը նորից վերականգնելու նպատակով: Սակայն ինչպես նկատում է Բունիաթյանը, պահանջարկի ընդլայնումը արտադրության էժանացման միջոցով կարող է նպաստել արտադրության միջոցների և սպառման միջև համապատասխանության ստեղծմանը, բայց դա հնարավոր չէ ամեն մի արտադրությունում, և հատկապես արտադրամիջոցների արդյունաբերությունում: Այդ դեպքում արտադրանքի էժանացումը միայն կսրի մրցակցությունը և կուժեղացնի դեպրեսիան, ինչի հետևանքով ֆինանսապես թույլ ձեռնարկությունները դուրս կմնան մրցակցությունից, իսկ մյուսները ստիպված կլինեն ժամանակավորապես դադարեցնելու իրենց գործունեությունը: Հարկ է նկատել, որ արդյունաբերության առանձին ոլորտներում հնարավոր է նաև արտադրության ընդհանուր, ինքնակամ կամ պայմանական կրճատում: Նման միջոցառումները առավել նպատակահարմար են սինդիկատների և կարտելների վերակազմավորված արտադրություններում:

Կոնյունկտուրայի անկման ժամանակ արտադրողները, կորցնելով իրենց հիմնական հենարանը առևտրում, ստիպված են փնտրել սպառման այլ ուղիներ: Եթե սովորական ժամանակ արտադրության ավելցուկը պահեստավորվում էր առևտրականների կողմից կամ արտահանվում, ապա ստեղծված վիճակում ակնկալել նման ելք կլիներ անմիտ, քանի որ ինչպես նկատում է Բունիաթյանը, գների անկման ժամանակ առևտրականները բավարարվում են ապրանքների միայն խիստ անհրաժեշտ քանակով, իսկ ապրանքների արտահանումը, ճիշտ է կարող է որոշակի հավասարակշռություն ապահովել, սակայն օտարերկրյա շուկաների գրավումը (ինչպես ցույց տվեց 1900թ. Ռուսաստանի արդյունաբերական ճգնաժամը) չի կարող հաջողություն ունենալ առանց արտահանման հիմնական և լուրջ կազմակերպման, ինչը շատ հաճախ բացակայում է արդյունաբերության շատ ոլորտներում:

Ակներև է, որ նշված բոլոր միջոցները Բունիաթյանը բնավ չի դիտում որպես վերակապիտալացման վերացման միջոց: Դրանք «որոշակի հավասարակշռություն են ստեղծում արտադրության և սպառման միջև,... արտադրողներին թույլ են տալիս ստանալու չափավոր շահույթ... և կանխում են ապրանքների հետագա գերարտադրությունը»:[2]

Մանրամասն վերլուծելով ճգնաժամերի բացասական հետևանքները և արդյունաբերական ճգնաժամերը որակելով որպես տնտեսական կյանքի առավել ծանր հիվանդություն, մյուս կողմից նա ընդգծում է այն, որ «մասնավոր սեփականության և ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսական կազմակերպությունում ձեռնարկատիրական շահույթը հանդիսանում է տնտեսական գործունեության **խթանիչ ուժը** և յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ տնտեսական աջակցությանը համաչափ հասարակական արդյունքի արդար բաշխման հիմքերից մեկը»:[3]

Ի.Շումպետերը ճգնաժամերը համարելով «ստեղծագործական ավերվածություններ» վկայակոչում է ֆրանսիացի տնտեսագետ Կ.Ժուգլյարի այն աֆորիստական խոսքերը, թե «Դեպրեսիայի միակ պատճառը ծաղկումն է»:[4] Կարծես նույն դիտակետից Մ.Բունիաթյանը նկատում է, թե դեպրեսիայի ծանր հետևանքները հաղթահարելու ճիգերը դառնում են տեխնոլոգիայի կատարելագործման և նոր տեխնիկական միջոցների ստեղծման պատճառ, ինչը հնարավորություն է տալիս «արդյունքներն էժանացնելով, սպառումն ընդլայնելով և նոր պահանջմունքներ ծնելով, դնելու նոր շրջանի վերելքի հիմքը»:[5]

Ճգնաժամերը օժանդակում են նաև խոշոր արդյունաբերությանը, դարձնելով նրան առաջատար մրցակցային ձեռնարկությունների հետ պայքարում: Ահա այդ ժամանակ երևան են գալիս ձեռնարկատերերի խոշոր միություններ՝ սինդիկատներ, կարտելներ, տրեստներ և այլն, որոնց վերաբերյալ Մ.Բունիաթյանը հայտնում է իր երկակի կարծիքը. եթե մի կողմից դրանք կարող են կապիտալի ճիշտ օգտագործման և արտադրության էժանացման շնորհիվ մեծացնել ձեռնարկությունների շահութաբերությունը, սահմանափակել մրցակցությունը՝ կարգավորելով արտադրության և սպառման պայմանները, սահմանել արտադրության պայմաններին առավել համապատասխան գներ, ապա մյուս կողմից իրենց շահերը վեր դասելով մյուսներից կարող են ուժեղացնել դեպրեսիան և խոչընդոտել տնտեսական կյանքի առողջացմանը:[6]

Արդյունաբերական ճգնաժամի ազդեցությունից աշխատանքի շուկան չի կարող զերծ մնալ. կրճատվում է աշխատանքային օրերի թիվը, բանվորների մի մասը ազատվում է աշխատանքից, իսկ աշխատավարձի անկումը ընդունում է համընդհանուր բնույթ: Սովորաբար բանվորները դրան հակազդում են գործադուլներով, որոնցով այդքան հարուստ է Անգլիայի տնտեսական պատմությունը: Գործազրկությունը և բանվորական դասակարգերի թերսպառումը արտադրության միջոցների ավելցուկի (որոնք կիրառություն չեն գտնում կապված դրանցով արտադրված արդյունքների նկատմամբ անբավարար պահանջարկի հետ) առկայության պայմաններում կազմում են ճգնաժամային էտապներին բնորոշ հակադրությունը:

---

[1] M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908,p 53.
[2] М.Бунятян, Экономические кризисы, М., 1915, с.69:
[3] Նույն տեղում:
[4] Шумпетер Й., История экономического анализа, СПб, 2001, с1479.
[5] M.Bouniatian, Les crises economiques, Paris, 1922, S.113:
[6] M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908.p 55.

Մ.Բունիաթյանի վերլուծությունները վկայում են, թե որքան բազմազան են արդյունաբերական ճգնաժամերը պայմանավորող գործոնները: Արդյունաբերական ճգնաժամերը համարելով «տնտեսական կյանքի ամենածանր ախտերը», որպես «ժամանակակից կապիտալիստական տնտեսության լավագույն արտահայտությունները իր բոլոր հակասություններով և թերություններով», նա առաջադրում է այն կարծիքը, թե ինչպես ասում է Պ.Սամուելսոնը տնտեսական ամեն մի վերելք իր մեջ պարունակում է «անկման» և կծկման հատիկ, իսկ ամեն մի կծկում իր մեջ կրում է աշխուժացման և էքսպանսիայի հատիկ:[1]

Անցյալ դարասկզբին Մ.Բունիաթյանի առաջադրած գաղափարները իրենց մեջ պարունակում են տնտեսական ճգնաժամերի նորովի գնահատության պոտենցիալ:

ՏԻՐՈՒՀԻ ՀՈՎԵՑԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՀՀ ՄԻ ՇԱՐՔ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ

Ապրանքային շուկաների վերլուծության ժամանակ կարևոր նշանակություն ունի այդ շուկաների համակենտրոնացման մակարդակի որոշումը: Այն պատկերացում է տալիս դրանում գործող տնտեսվարող սուբյեկտների շուկայական իշխանության, ինչպես նաև ապրանքային շուկաների մենաշնորհացման աստիճանի մասին[2]:

Տնտեսագիտական գրականության մեջ և միջազգային պրակտիկայում շուկայի համակենտրոնացման աստիճանը որոշվում է մի շարք ցուցանիշների օգնությամբ (համակենտրոնացման, էնտրոպիայի, ֆիրմաների շուկայական բաժինների լոգարիթմների դիսպերսիաների գործակիցների, Լերների, Հերֆենդալ-Հիրշմանի, Լինդի, Հոլլ-Տայդմանի ինդեքսների և այլ ցուցանիշների):

Օգտագործելով վերոհիշյալ ցուցանիշները, փորձենք գնահատել 2001-2006 թվականներին համակենտրոնացման աստիճանները հանրապետության մի շարք ապրանքային շուկաներում (տե՛ս Աղյուսակ-1):

«Պաղպաղակ» ապրանքային շուկայում 2001 թվականին գործել են 10 տնտեսվարող սուբյեկտ[3]: Իրացման ծավալով առաջին երեք տեղերը զբաղեցրել են՝«Շանթ Պլյուս» ՍՊԸ՝ 35.8%, «Թամարա» ՍՊԸ՝ 34.7% և «Աշտարակ կաթ» ՓԲԸ՝ 16.0%՝ 86.5 տոկոս ընդհանուր բաժնով: «Շանթ Պլյուս» ՍՊԸ և «Թամարա» ՍՊԸ ունեցել են գերիշխող դիրք: 2002 թվականին նույնպես գործել են 10 տնտեսվարող սուբյեկտներ և առաջին 3 խոշոր տնտեսվարող սուբյեկտները նույնն են մնացել և դրանց իրացման ընդհանուր ծավալը կազմել է 80.9%: 2002 թվականին շուկայի իրացման ծավալը 2001 թվականի նկատմամբ աճել 25.7%: «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի իրացման ծավալն ավելացել է 0.25%-ով, իսկ «Թամարա» ՍՊԸ-ի նվազել է 5.5%-ով: 2002 թվականին գերիշխող դիրք ունեցել է միայն «Շանթ Պլյուս» ՍՊԸ: 2004թ. գործել են 13 տնտեսվարող սուբյեկտներ, իսկ 2005 թվականին՝ 15: 2004 թվականի նկատմամբ 2005 իրացման ծավալն աճել է 19.4%: 2004 և 2005 թվականներին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ն ունեցել է գերիշխող դիրք: 2004 թվականին «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի բաժինը կազմել է շուկայի ծավալի 36.1%, իսկ 2005 թվականին՝ 37.7%: «Պաղպաղակ» ապրանքային շուկայում 3 խոշոր տնտեսվարող սուբյեկտների համատեղ բաժինը 2004թ. կազմել է 85.6%, իսկ 2005 թ.՝ 83.4%:

Դիտարկված 4 տարիներից յուրաքանչյուրի ընթացքում էլ համակենտրոնացման գործակցի ցուցանիշով (CR_3)[4] «Պաղպաղակ» ապրանքային շուկան բարձր համակենտրոնացված է եղել (CR_3 >70%-ից): Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը[5] նույնպես վկայում է համակենտրոնացման բարձր մակարդակի մասին (HHI>2000-ից):

---

[1] Самуэльсон П., Нордхаус В., Экономика, М., 1997, с.595.

[2] Տե՛ս Մ.Վ.Միքայելյան «Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» , Երևան, 2005թ., էջ 83:

[3] Սույն հոդվածում բերվող այս և մյուս ցուցանիշները հաշվարկվել են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից վերցված տվյալների հիման:

[4] Ապրանքային շուկայում i թվով ամենախոշոր իրացման ծավալ ունեցող տնտեսվարող սուբյեկտի իրացման բաժինների գումարն է.

$$CR_i = \sum_{i=1}^{n} q_i$$

որտեղ q_i-i-րդ տնտեսվարող սուբյեկտի ապրանքի իրացման բաժինն է՝ շուկայի ընդհանուր ծավալում:

[5] Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$HHI = \sum_{i=1}^{n} q_i^2$$

որտեղ՝ q_i-ն i-րդ տնտեսվարող սուբյեկտի բաժինն է (տոկոսներով) շուկայի ընդհանուր ծավալում: HHI ≤ 10000-ից: (Այս ինդեքսը միաժամանակ ցույց է տալիս, թե առավել մանր տնտեսվարող սուբյեկտները ինչ տեղ են գրավում շուկայում:Արդյոք դրանք կարող են շուկայական իշխանությամբ օժտված տնտեսվարող սուբյեկտների հետ մրցակցել):